ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 41-ՐԴ ԳԼԽԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ՝ ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հրայր Թովմասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 41-րդ գլխի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմողի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումներով և հաշվի առնելով, որ սույն միջնորդությամբ չի հիմնավորվում գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությունը՝ «Հրայր Թովմասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 41-րդ գլխի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմողի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴԱՈ-174